

Թաղիս կիներն պարկեշտ են եւ աշխատասէր: Ահա իրենց ծրագիրն.

«Երկուշաբթի՝ լաթ լուալ եւ երեկոյին ձեռներն իրենց ամուսիններուն ցոյց տալ.

«Երեքշաբթի՝ տախտակ սրբել.

«Չորեքշաբթի՝ պատուհան մաքրել.

«Հինգշաբթի՝ կարկտել եւ քթի տակէն մոմալ.

«Ուրբաթ՝ ճերմակեղէնները հարթել.

«Շաբաթ՝ խոհարանի վերաբերուած գործերը տեսնել եւ բաղանիք երթալ.

«Կիրակի՝ եկեղեցի երթալ եւ վերջը զիրար բամբասել»:

Թաղիս մէջ երկու հարիւր վաթսունի չափ տուն կայ հայու:

Հոս *պարոնի* տեղ *տէր* կգործածեն, բայց *տէրի* տեղ դեռ բան մը չեն գտած:

ԻԷ.

ՔԱՐԹԱԼ

Քանի մը օր առաջ Քարթալ գնացինք տեղւոյն ազգայիններուն վրայօք տեղեկութիւններ հաւաքելու համար. բայց բարեբախտաբար թաղին մէջ մարդ մը չկրցինք գտնել բացի զինեպաններէ, որք զինի կու տային մեզ ամեն անգամ, որ իրենցմէ տեղեկութիւն կ'ուզէինք: Բարեբախտաբար ըսինք, եւ իրաւունք ունինք. վասնզի իմացանք, որ թաղիս Հայերն այգեգործ ըլլալով՝ իրենց այգիները գնացած էին աշխատելու: Երանի թէ բոլոր թաղերու հայերն այգեգործ ըլլային եւ սրճարաններու մէջ խաղերով չանցունէին իրենց թանկագին ժամերը: Ուստի յետ դառնալով՝ Պօլիս անցանք եւ հետեւեալ տեղեկութիւնները քաղեցինք այնպիսի անձէ մը, որ լաւ կճանաչէ Քարթալցին եւ մանաւանդ անոր զինին:

Քարթալցին – ըսաւ այս անձը, – բնաւ հոգ չըներ, թէ ազգային վարչութիւն կայ, թէ երեսփոխանական ժողովն չըներ, ինչ որ ընել պարտաւոր է, թէ ազգային վարժարանները կիրքերու վառարան դարձած են եւ այլն. վասնզի *ազգային վարչութիւն, երեսփոխանական ժողով, ազգային վարժարան* բառերն իրեն համար օտարական են, եւ Քարթալցին այն ատեն կսիրէ օտարականն՝ երբոր ութը դահեկանի ծախէ անոր զինին՝ որ դահեկան արժէք ունի. եւ որովհետեւ Ազգային վարչութիւնն,